ՀԱՅԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ստեփանյան Հ. (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)

hasmikstepanyan@yahoo.com

Բանալի բառեր՝ հայեր, ներդրում, օսմանյան, կայսրություն:

1. Ձեկուցումը նվիրված է Օսմանյան կայսրության պալատական, դիվանագիտական, վարչական, դատական, զինվորական բնագավառներում, բանակում ու նոր զարգացող բուրժուական հարաբերությունների մաս հանդիսացող բանկային, արդյունաբերական, ապահովագրական համակարգում, բժշկության, քաղաքաշինության, արհեստների, առևտրի, գիտության, մշակույթի տարբեր ոլորտներում՝ ճարտարապետության, կերպարվեստի, լուսանկարչության, թատրոնի, երաժշտության, կիրառական արվեստների, երկրի տնտեսության համար նոր ձևավորվող կարևորագույն ճյուղերի, ինչպես նաև սպորտի, հասարակական կազմակերպությունների ոլորտում արևմտահայության ունեցած մեծագույն ներդրմանը:

Ձեկուցման նյութը վերցված է վերջերս տպագրված մեր նույնանուն ուսումնասիրությունից: Վերջինս առաջին անգամ նման ծավալով և նման բովանդակությամբ ներկայացնում է Օսմանյան կայսրությունում արևմտահայության կյանքը: Կայսրության ամենատարբեր ոլորտներում ունեցած այն ներդրումները, որոնք դուրս են գալիս զուտ ազգային շրջանակներից և ծառայել են ողջ կայսրության և նրանում ապրող թուրքալեզու ժողովուրդների զարգացմանը, մինչ օրս չեն արժանացել համակողմանի ուսումնասիրման:

Պատմության բազմաթիվ ճերմակ էջեր կարոտ են նոր ուսումնասիրությունների ու բացահայտումների: Դրանք կկանխեն մեր պատմության խեղաթյուրման ընթացքը, մեր ժողովրդի ունեցած

մեծագույն ներդրման ուրացումն ու թուրքացման փաստերը, դրա շարունակական ընթացքի քաղաքականությունը:

2. Արևմտահայության ներդրումն Օսմանյան կայսրության տպագրական, հրատարակչական ասպարեզում:

3. Հայատառ թուրքերեն ինքնուրույն և թարգմանական գրականության, հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումների անմիջական ազդեցությունը թուրք նոր գրականության ու նրա լուսավորիչների սերնդի ձևավորման, թուրքերեն գրական լեզվի, թատրոնի, դրամատուրգիայի, լրագրողական ոլորտների ձևավորման ու զարգացման մեջ:

THE INVESTMENT OF ARMENIANS IN THE OTTOMAN EMPIRE

Stepanyan H. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Oriental Studies, Armenia)